ՄԱՐԿ ՍԱՅՔՍԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԵՐԻ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

ՍԱՄՈՒԷԼ ՊՕՂՈՍԵԱՆ
samvelp77@mail.ru

Բրիտանացի պետական գործիչ, դիւանագէտ, արեւելագէտ Մարկ Սայքսը (Mark Sykes, 1879-1919) *շատերին յայտնի է* 1916*ին ստորագրուած Սայքս-Պիկոյի Համաձայնագրի շնորհիւ։ Քչերին է յայտնի, որ նա մի քանի անգամ եղել է Հայաստանում ու Կիլիկիայում եւ այդ մասին թողել է ուղեգրական յուշեր, աշխուժօրէն մասնակցել է Ֆրանսիական բանակի կազմում ստեղծուած Հայկական Լեգէոնի կազմաւորման շուրջ եղած բանակցութիւններին եւ փորձել է իր մասնակցութիւնը բերել Հայկական Հարցի լուծմանը։ Այս յօդուածում մենք կը ներկայացնենք Հայաստանի, հայերի եւ Հայկական Հարցի վերաբերեալ նրա մօտեցումները եւ դրանց փոփոխութիւնները։*

Մարկ Սայքսը բազմիցս ճանապարհորդել է Օսմանեան Կայսրութիւնում, եղել է Միջերկրականի երկրներում, Եգիպտոսում, Հարաւային Ափրիկէում, Հնդկաստանում, Կարիբեան աւազանում, Մեքսիկայում, Ա. Մ. Նահանգներում ու Կանադայում։ Սակայն ամէնից շատ նրան յետագայում ձգում է Մերձաւոր Արեւելքը։ Նա իր առանձնատանը ունեցել է թուրքական սենեակ, որը ձեւաւորել է մի հայ նկարիչ[1]*։* 1906*ին նշանակուել է Կ.Պոլսի բրիտանական դեսպանատան կցորդ,* 1912*ին որպէս Պահպանողական Կուսակցութեան անդամ ընտրուել է խորհրդարանի անդամ,* 1913*ին ստացել բարոնի* (Sir Mark Sykes, 6th Baronet) *տիտղոս։ Սայքսը Բրիտանիայի Համայնքների Պալատի կաթոլիկ խմբաւորման նախագահն էր*[2]*։*

Քեմբրիջի Համալսարանում ուսանելու տարիներից սկսած գրել է մի շարք գրքեր։ Նրա արեւելագիտական ուսումնասիրութիւններից շատերը գրուած են իր ճանապարհորդութիւնների անմիջական տպաւորութեան տակ։

1900*ին նա տպագրեց* *Through Five Turkish Provinces*[3] *ուղեգրութիւնը, ուր նկարագրում է նաեւ Բիթլիսի եւ Վանի նահանգներում* 1895-1896*ի հայկական կոտորածներից յետոյ տիրող իրադրութիւնը, քրդերի ու թուրքերի աւազակաբարոյ վարքն ու բարքը, հայերի ծանր վիճակը, Ռուսական Կայսրութեան սահմաններում գտնուող Երեւանի նահանգում տիրող իրադրութիւնը։ Այս ուղեւորութիւնը նա իրականացրել է* 1899*ին, երբ դեռ քսանամեայ երիտասարդ էր։ Նրան ուղեկցում էին թուրքեր ու քրդեր։ Սայքսին զարմացրել էր այն անպատժելիութեան մթնոլորտը, որը ստեղծել էին համիդիական քրդերը*[4]*, որոնցից վախե-*

նում էին անգամ թուրք սպաներն ու ոստիկանները։ Քրդերը ամէն կերպ փորձում էին սիրաշահել բրիտանացի ճանապարհորդին։ Իսկ քուրդ ցեղապետերից մէկը նշում է, որ «անգլիացիներն ու քրդերը եղբայրներ են եւ մի օր միասին կռուելու են մոսկովիտների դէմ»[5]։ Նա մեղադրում է հայերին խեղճութեան, վախկոտութեան մէջ, մոռանալով, որ ընդամէնը 3-4 տարի էր անցել սուլթան Աբդուլ Համիդի հրամանով իրականացուած հայկական զանգուածային ջարդերից, որոնց զոհ էին գնացել մօտ 300.000 հայեր, 200.000 հայեր բռնի մահմեդականացուել էին, նոյնքան էլ արտագաղթել էին։ Երեւանում Սայքսից գողանում են ատրճանակը, որը նա համարում է հայերի ձեռքի գործը[6]։

Այս առաջին ճանապարհորդութիւնից յետոյ Սայքսը չափազանց վատ կարծիք էր կազմել հայերի մասին[7]։ Սակայն նրա յետագայ չորս ճանապարհորդութիւնները Արեւմտեան Հայաստանում եւ Կիլիկիայում հիմնականում փոխում են նրա մօտ ստեղծուած այդ առաջին տպաւորութիւնը։

Իր միւս աշխատութիւնում՝ *The Caliphs' Last Heritage. A short History of the Turkish Empire*[8], նա ներկայացրել է Մերձաւոր Արեւելքի անցեալը՝ հնագոյն ժամանակներից մինչեւ սուլթան Սելիմի օրօք օսմանցիների կողմից նուաճուելը, ինչպէս նաեւ 1906-1913ին իրականացրած իր ուղեւորութիւնները։ Գիրքը հարուստ է հեղինակի կատարած լուսանկարներով եւ կազմած քարտէզներով։ Զափազանց հետաքրքիր է 1906ի ուղեւորութիւնը Միջագետքում եւ Հայաստանում, որը տեւել է 9 ամիս, ինչպէս նաեւ 1913ի ուղեւորութիւնը Կիլիկիայում։

Սայքսը այս գրքում, ի տարբերութիւն նախորդի, հայերին ներկայացնում է որպէս համարձակ, յեղափոխականօրէն տրամադրուած, չափազանց հայրենասէր, նոյնիսկ՝ սեփական ուժերը գերագնահատող ազգ։ Նա նշում է, որ հայերի դժբախտութիւններից մէկը նրանց քաղաքական եւ աշխարհագ-րական կացութիւնն է, քանի որ նրանք Թուրքիայի արեւելեան շրջաններում փոքրամասնութիւն կամ յարաբերական մեծամասնութիւն են եւ բաժանուած են լեռնաբնակ քրդերով[9]։ Նա ամէն կերպ խուսափում է Հայաստան եզրը օգտագործելուց[10], համարելով, որ Հայաստան երկիր ստեղծելն անհնար է։ Դրանով է պայմանաւորուած, որ նա Սեբաստիայի եւ Էրզրումի նահանգները ներկայացնում է Անատոլիայի, իսկ Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի նահանգները՝ Քրդստանի մէջ։ «Հայաստանը հայերի համար կը լինի գրեթէ նոյնպիսի անիմաստ ճիչ, ինչպէս Անգլիան բրիտոնների»[11],- գրում է նա։ Այստեղ, նա մի քանի անգամ մատնանշում է, որ թուրքական իշխանութիւնները, նախ՝ սուլթանական, ապա՝ երիտթուրքական, յարմար պահի են սպասում հայերին ոչնչացնելու համար, իսկ մահմեդական ամբոխը լիովին պատրաստ է դրան[12]։ Փաստօրէն, բրիտանացի ճանապարհորդ-

դիւանագէտի աչքի առաջ պարզորոշ գծագրւում է մօտալուտ ցեղասպանութեան հնարաւորութիւնը։

Երբ Առաջին Համաշխարհային Պատերազմը սկսուեց, Մարկ Սայքսի գիտելիքներն ու ընդունակութիւնները հաշուի առնելով, նրան աշխատանքի հրաւիրեցին Մեծ Բրիտանիայի Ռազմական Նախարարութեան Մերձաւոր Արեւելքի հարցերով յանձնախմբում։ Նրա եւ Ռազմական նախարար լորդ Հորացիո Քիչնրրի (Horatio Herbert Kitchener, 1850-1916) հայեացքները մերձարեւելեան հարցերում համընկնում էին, որի շնորհիւ Սայքսը շուտով մեծ դերակատարութիւն ստանձնեց յանձնաժողովում, մեծացաւ նրա ազդեցութիւնը Բրիտանիայի մերձարեւելեան քաղաքականութիւնում։ Սայքսի եւ յանձնաժողովի նրա գործակիցների ջանքերով, Մերձաւոր Արեւելքի երկրների համար սկսեցին օգտագործել հին յունական ու հռոմէական անուանումները՝ Սիրիա, Պաղեստին, Իրաք, Միջագետք[13]։

Գնդապետ Մարկ Սայքսը 1915ի ամռանը ժամանում է Կահիրէ եւ հանդիպում հայկական կազմակերպութիւնների ղեկավարների հետ։ Վերակազմեալ Հնչակեան Կուսակցութեան ղեկավարներից Միհրան Տամատեանի (1863-1945) հետ հանդիպման ընթացքում Սայքսը բողոքում է հայերի անճարակութիւնից, նշելով որ Ալեքսանդրէտի նախկին անգլիական հիւպատոս Քաթոնին Եգիպտոսից լրտեսութեան համար Կիլիկիա էր ուղարկել մի քանի հայերի, որոնք անյաջողութեան են մատնուել։ Նրանք կամ ձերբակալուել են, կամ էլ տեղացի հայերի ձերբակալման ու մահապատժի պատճառ են դարձել։ Տամատեանը բացատրում է, որ այդ արդիւնքները բնական էին, քանի որ ուղարկել էին պատահական մարդկանց, իսկ եթէ կուսակցութիւններին դիմէին, ապա աւելի մեծ արդիւնքներ կ՚ունենային։ Տամատեանը նաեւ ափսոսանք է յայտնում, որ Կիլիկիայի ուղղութեամբ հայերի առաջարկած արշաւանքը[14] չիրականացուեց եւ այդ երկրամասի հայաթափման պատճառ դարձաւ, քանի որ հայերին արդէն սկսել էին տարագրել։ Նա նշում է, որ եթէ Դաշնակիցները ցանկանում են տեղեկանալ Թուրքիայի ներսում տեղի ունեցող անցուդարձին, լրտեսել թշնամու բանակի տեղաշարժերը, ապա պէտք է ուշադրութիւնը սեւեռեն Ալեքսանդրէտից հարաւ եւ Ռասխանզիր հրուանդանի մօտ, Մուսա Լեռան վրայ ցամաք հանեն փոքրաթիւ ուժեր՝ բաւարար ռազմամթերքով ու պարէնով, որին միացնելու էին հայ յեղափոխականներից կազմուած մի ջոկատ։ Այդտեղ գտնուող Սուեթիայի գիւղախմբի 6-7.000 հայերը կը միանային այդ ուժերին եւ օգտագործելով տեղի անառիկ դիրքը, Մուսա Լեռը կը վերածէին Դաշնակիցների համար երկրորդ Ջիբրալթարի՝ թուրքական ծովեզերքում։ Տեղի Ալեւի աղանդին հետեւող մահմեդականները թուրքերին թշնամի էին եւ լաւ յարաբերութիւնների մէջ էին հայերի հետ։ Նրանք

ազատ երթեւեկ ունէին Թուրքիայի ներսում եւ հեշտութեամբ կարող էին լրտեսել թշնամու բոլոր շարժումները[15]։

Մարկ Սայքսը, որն ուսումնասիրել էր գրեթէ ամբողջ Հայաստանը եւ Կիլիկիան, զարմանում է լսելով, որ Ալեքսանդրէտից հարաւ հայ բնակչութիւն կար եւ պատասխանում է. «Թուրքիոյ հայաբնակ մասերը Իսքենտէրունի մօտ կը վերջանան: Իսքենտէրունի հարաւը հայ բնակչութիւն չկայ»: *Տամատեան բացատրում է, որ* «ո՛չ միայն Մուսա Լերան կողերուն վրայ հայ շէն գիւղեր կան, այլեւ Որոնդէսի գետաբերանին հարաւը Ճեպէլ Աքրա կոչուած հրուանդանին վրայ կան Քեսապի հայ գիւղերը, որոնց բնակիչները Սուետիոյ հայերուն հետ միասին 10.000էն աւելի թիւ մը կը կազմեն: Այստեղին եւ Կիպրոսի միջեւ հազիւ 75 մղոն հեռաւորութիւն կայ, որով այդ կողմ կիպրական զօրք փոխադրելը մէկ գիշերուան գործ է»[16]։ *Սայքսը նոթագրում է այդ տեղեկութիւնները եւ խոստանում յայտնել ուր որ պէտք է։*

Մեզ յայտնի չէ, թէ նա ինչ զեկուցեց իր իշխանութիւններին Մուսա Լերան մասին, սակայն, մուսալեռցիների հերոսական ինքնապաշտպանութիւնը 1915 *Յուլիս-Սեպտեմբեր ամիսներին ցոյց տուեց, որ Տամատեանի առաջարկները բաւական իրատեսական էին։ Հաւանաբար, հայ գործիչների հետ շփումներն էին պատճառ դարձել, որ Սայքսը* 1915*ի աշնանը առաջարկում էր դաշնակից զօրքերի ցամաքահանում կատարել Ալեքսանդրէտում*[17]։

Ռուսական բանակի կողմից 1916 *Փետրուարի* 16*ին Էրզրումի գրաւումը Դաշնակից երկրների համար կարեւոր յաջողութիւն էր։ Դեռեւս* 1906*ին, երբ Սայքսը այցելել էր Էրզրում, նրան զարմացրել էին քաղաքի դիրքն ու ամրութիւնները եւ նա նշում էր.* «ո՞ր խենթը երբեւէ կը գրոհի այն»[18]։ *Փետրուարի* 17*ին նա այդ թեմայի շուրջ զրուցում է Լոնդոնում ֆրանսիական ռազմական կցորդ, գնդապետ Դը Լա Պանուսի հետ եւ ներկայացնում է իր մտորումները։ Նա վստահ էր, որ Էրզրումը վերագրաւելու համար թուրքերը ստիպուած կը լինեն ուժեր կենտրոնացնել Երզնկայում։ Այդ նպատակով թուրքերը զօրքեր պէտք է ուղարկէին Կ.Պոլսից կամ Արեւմտեան Անատոլիայի այլ շրջաններից, հետեւաբար նրանք ստիպուած կը թուլացնէին այդ ճակատները, ինչպէս նաեւ չէին կարողանայ օժանդակ ուժեր ուղարկել Միջագետք։ Նա անհաւանական էր համարում, որ մինչեւ Յունիս թուրքերը կարողանային Էրզրումի ուղղութեամբ ռազմական գործողութիւններ սկսել։ Սակայն Սայքսին մտահոգում էր այն, որ թուրքական իշխանութիւնները, ըստ իրենց սովորոյթի, կարող էին կեղծ լուրեր տարածել, որ ռուսական բանակի հետ եկող կովկասահայերը մահմեդականների կոտորածներ են կազմակերպում եւ այդպիսով գրգռէին արաբներին, որոնք ցանկութիւն ունէին միանալ հակաթուրքական պայքարին։ Նա համոզուած էր, որ հայերը, բնականաբար, կը ցանկանան իրենց հայրենակիցների վրէժը*

լուծել, սակայն նրանց արածը թուրքերը փութաջանօրէն կը չափազանցնեն քարոզչական նպատակներով[19]։

Սայքսը հետեւում էր Պահպանողական Կուսակցութեան հինաւուրց մտայնութեանը, որ պէտք է Օսմանեան Կայսրութիւնը պահպանել որպէս պատնէշ դէպի Միջերկրական Ծով ռուսական առաջխաղացման դէմ։ Պահպանողականները մտածում էին, որ Ռուսաստանը աչք ունի բրիտանական գլխաւոր գաղութի՝ Հնդկաստանի վրայ, եւ ռուսական նաւատորմի յայտնուելը Միջերկրականում կը կտրի Բրիտանիայի հաղորդակցութիւնը այդ գաղութի հետ։ Սակայն Ազատական Կուսակցութեան ղեկավարները, այդ թւում վարչապետ Դէյվիդ Լոյդ Ջորջը (David Lloyd George, 1863-1945) *չէին կիսում այդ տեսակէտը եւ կողմնակից էին Օսմանեան Կայսրութեան անդամահատմանը*[20]։

Սակայն Ա. Համաշխարհային Պատերազմի սկսուելուց յետոյ Կայսրութեան բաժանումը դարձաւ անխուսափելի, քանի որ տարբեր պատճառներով դրան էին ձգտում Ռուսաստանը, Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Յունաստանը, հայերը, արաբները եւ այլ ուժեր։

Հայաստանի ապագայի հարցը Ա. Համաշխարհային Պատերազմի տարիներին աչխուժօրէն քննարկւում էր Դաշնակից տէրութիւնների կողմից։ Պատերազմի նախօրէին, ինչպէս յայտնի է, Հայկական Հարցը քննարկուել էր մեծ պետութիւնների կողմից եւ գլխաւորապէս Ռուսաստանի ջանքերով հասել էր որոշակի հանգրուանի։ 1914*ի Յունուարի* 26*ի ռուս-թուրքական համաձայնագրով, Արեւմտեան Հայաստանի* 7 *նահանգները* (*Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Էրզրում, Սեբաստիա, Տրապիզոն*) *բաժանուելու էին երկու վարչական միաւորների, որոնք ղեկավարելու էին եւրոպացի նահանգապետեր*[21]։ *Սակայն պատերազմի սկսուելուն պէս երիտթուրքական իշխանութիւնները մի կողմ դրեցին Հայաստանում բարենորոգումներ կատարելու նախագիծը եւ դրա փոխարէն իրականացրին Հայոց Ցեղասպանութիւնը։ Ռուսաստանը ձգտում էր նուաճել Արեւմտեան Հայաստանը եւ նոյնիսկ Կիլիկիան, որով իր տիրապետութիւնը կը հասցնէր մինչեւ Միջերկրական Ծով։ Բրիտանիան ու Ֆրանսիան դէմ էին իրենց դաշնակցի այդչափ առաջխաղացմանը Մերձաւոր Արեւելքում, քանի որ իրենց սեփական նկատառումներն ունէին Կիլիկիայում, Սիրիայում, Իրաքում, Պարսից Ծոցի աւազանում։ Այդ ամէնը ենթադրում էր, որ նրանք պէտք է փորձէին Ռուսաստանին հնարաւորինս հեռու պահել Սիրիայից ու Միջագետքից։ Այսպիսով, Օսմանեան Կայսրութեան բաժանման հարցը քննարկելիս Դաշնակից երկրների միջեւ որոշ անհամաձայնութիւններ առաջ եկան Արեւմտեան Հայաստանի ու Կիլիկիայի պատկանելութեան խնդրում։*

Սայքսը համարւում էր մերձաւորարեւելեան հարցերի լաւագոյն գիտակներից մէկը եւ նրա կարծիքը հաշուի էին առնում բրիտանական եւ ֆրանսիական իշխանութիւնները։ Բրիտանիայի եւ Ֆրանսիայի մի-

ջեւ Օսմանեան Կայսրութեան անդամահատման հարցում համաձայնութիւն կայացնելու բարդ խնդիրը յանձնարարւում է Մարկ Սայքսին եւ ֆրանսիական գործիչ Ֆրանսուա Ժորժ Պիկոյին (Francois Georges Picot, 1870-1951), *որը նախկինում եղել էր Բէյրութի ֆրանսիական հիւպատոս։ Նրանք բանակցութիւնները սկսեցին* 1915*ի Նոյեմբերին, Լոնդոնում, ապա համատեղ կազմեցին այն սահմանները, ըստ որի բաժանուելու էին արաբական, հայկական եւ քրդական տարածքները։*

Արեւմտեան Հայաստանը փաստօրէն բաժանուելու էր Ռուսաստանի ու Ֆրանսիայի միջեւ։ Հաւանաբար, բրիտանական դիւանագիտութեան առաջարկած ծուղակներից էր այն, որ հարաւային Հայաստանը եւ Քրդստանը առաջարկւում էին Ֆրանսիային, որի սահմանները պէտք է հասնէին մինչեւ ռուս-պարսկական սահմանը։ Փաստօրէն, ռուսների առաջխաղացումը դէպի աւելի հարաւ, բրիտանական կողմը փորձում էր այս անգամ կանխել Ֆրանսիայի միջոցով, որը պէտք է փոխարինէր կործանուած օսմանեան պատնէշին։ Կիլիկիան, Խարբերդը, Դիարբեքիրը եւ Քրդստանը, հիւսիսում Տաւրոսի լեռնաշղթայով սահմանակից էին դառնալու ռուսական տարածքներին, իսկ հարաւում ունենալով Սիրիան՝ Ֆրանսիան կարող էր ամուր պատնէշ ստեղծել ռուսների յետագայ առաջխաղացման դէմ դէպի Մերձաւոր Արեւելք, Եգիպտոս եւ Միջերկրականի արեւելեան ափը։ Իսկ բրիտանական տիրոյթները ձգւում էին ֆրանսիականից հարաւ՝ Թիկունքում։

Ինչպէս տեսնում ենք, բրիտանական կողմը գտել էր այն լուծումը, թէ ինչպէս կասեցնի ռուսական առաջխաղացումը դէպի Միջերկրական եւ Սուէզի ջրանցք։ Հետեւաբար, այլեւս կարիք չկար պահպանելու Օսմանեան Կայսրութիւնը, որի համար հսկայական ջանքեր էր գործադրել բրիտանական դիւանագիտութիւնը, քանի որ այդ փլուզուող պետութեան գոյութեան միակ իմաստը վերջին հարիւրամեակում հանդիսացել էր ռուսներին հարաւ չթողնելը։

1916 *Մարտի* 10*ին, Պետրոգրադում, բրիտանական եւ ֆրանսիական դեսպաններ Ջորջ Բիւքենընը* (George Buchanan, 1854-1924) *եւ Մորիս Պալէոլոգը* (Maurice Paleologue, 1859-1944) *Սայքսին եւ Պիկոյին ներկայացնում են Ռուսաստանի արտգործնախարար Սերգէյ Սազոնովին* (Sergei Sazonov, 1861-1927), *որպէսզի քննարկեն Օսմանեան Կայսրութեան տարածքային բաժանման հարցը։ Սայքսը եւ Պիկոն, Սազոնովին յայտնում են իրենց լոնդոնեան բանակցութիւնների արդիւնքները եւ դրանց հետեւանքով կազմուած նոր սահմանների քարտէզը։ Նրանց սահմանագծումը չափազանց զարմացնում է Սազոնովին, քանի որ դրանով ֆրանսիական ազդեցութեան գօտին հասնում է մինչեւ Պարսկաստան։ Սազոնովը նշում է, որ այդ ձեւով համաձայնագիր անհնար է ընդունել եւ հարցը ինքը դեռ պէտք է քննարկի համապատասխան մարմինների հետ*[22]։

Նախկին բանակցութիւններում եւ զրոյցներում Ֆրանսիան ցանկութիւն էր յայտնել ստանալ Կիլիկիան եւ Սիրիան։ Հետեւաբար, Սազոնովի համար նորութիւն էր, որ Ֆրանսիացիները աչք էին դրել նաեւ հարաւային Հայաստանի եւ Քրդստանի վրայ։

Մարտի 11ին Սայքսը ռուսական կողմին է ներկայացնում մի նոր սահմանագծում, որը կարող էր բաւարարել նրանց ցանկութիւնները։ Դրանով, նեստորական մարզը՝ Հեքքիարին եւ Բիթլիսի անցուղիները թողնւում էին Ռուսաստանին, իսկ Ֆրանսիայի ազդեցութեան գօտում ընդգրկւում էր նաեւ ամբողջ Փոքր Հայքը՝ Սեբաստիայի նահանգը[23]*։ Փաստօրէն, հիմնականում քրդերով ու ասորիներով բնակեցուած Հեքքիարին յանձնւում էր Ռուսաստանին, իսկ փոխարէնը Ֆրանսիան ստանալու էր Սեբաստիայի նահանգը։ Այդ քայլով փակում էին Ռուսաստանի յետագայ առաջխաղացման ճանապարհը դէպի արեւմուտք՝ Փոքր Ասիա։*

Մարտի 12ին դեսպան Բիւքենընին ուղղուած նամակում Սայքսը հետեւեալ կերպ է պարզաբանում Սազոնովին առաջարկուած նոր սահմանագծման մասին իր հիմնաւորումները.-

«Լաւ կշռադատելով նոր առաջարկութիւնը, այսինքն՝ Հեքքիարիի փոխարէն Սվազը կապոյտ գօտու մէջ մտցնելու առաջարկութիւնը, ես յանգեցի այն եզրակացութեան, որ հետեւեալ կէտերը կարող են Պրն. Սազոնովի համար հետաքրքրութիւն ներկայացնել:

I. Ինձ թւում է, որ մենք պէտք է ընդունենք, որ, հայկական վերջին կոտորածների ծայրայեղ դաժանութեան ու անգթութեան հետեւանքով, չի կարելի հանդուրժել բուն Հայաստանը օսմանեան իշխանութեան տակ թողնելու հնարաւորութիւնը: Այդ նախագիծը, եթէ անգամ ուղեկցուէր բարենորոգումներով, Անգլիայում եւ Միացեալ Նահանգներում կը յարուցի զայրոյթի պոռթկում եւ զէնք կը դառնայ հաշտութիւնից բոլոր դժգոհների համար:

II. Ուստի հայկական հարցը կարող է լուծուել՝ Ա.) եթէ հիմնուի հայկական պետութիւն թուրքական սիւզերէնութեան ներքոյ, մի բան, որը ենթադրում է կա՛մ Կովկասում ինտրիգներ սարքող երկրորդ Բուլղարիայի ստեղծում, կա՛մ ոչ-կենսունակ ծրագիր, քանի որ հայերն ի վիճակի չեն մրցակցելու քրդերի հետ: Բ.) Եթէ ստեղծուի միջազգային վերահսկողութեան տակ գտնուող եւ չէզոք (?) կառավարիչներ ունեցող հայկական կառավարութիւն, մի բան, որը մշտական բանսարկութիւնների եւ «հարցերի» համար լայն հնարաւորութիւններ կը ստեղծի, որոնցից Գերմանիան վաղ թէ ուշ կը քաղի իր օգուտը: Գ.) Եթէ Հայաստանը՝ առանց նախապատրաստութեան եւ լիովին յանձնուի Ռուսաստանին, ապա ռուսական քաղաքական համակարգի մէջ կը ներառուի մի երկիր, որը լեփ-լեցուն է Կովկասում եւ Պարսկաստանում գոյութիւն ունեցող յեղափոխական կազմակերպութիւնների հետ

մշտական կապերի մէջ գտնուող յեղափոխական ընկերութիւններով: Մի հայ յեղափոխական (դաշնակցական), մի անգամ ինձ ասել է, որ դա հիանալի կը լինէր, քանի որ այն պահից, երբ ամբողջ հայ բնակչութիւնն անցնի ռուսական հպատակութեան տակ, յեղափոխական ընկերութիւնները Կովկասում, Ադրբեջանում եւ Թուրքիայում անմիջապէս կ'ամրապնդուեն, եւ բաւական կը լինի լոկ ընդհանուր դժգոհութիւն, որպէսզի պահպանուի նրանց կենսունակութիւնը: Դ.) Եթէ հարցը լուծուի այնպէս, որ նախկին Հռոմէական կամ Փոքր Հայքը յանձնուի Ֆրանսիային եւ առդիր քարտէզի դեղին գոտին անեքսիայի ենթարկուի Ռուսաստանի կողմից: Ես այս եղանակը համարում եմ ամենագոհացուցիչը եւ վաղուց այն նկատի ունէի, բայց երբեք առաջ չէի քաշում, որովհետեւ միշտ կարծում էի, թէ ռուսական կառավարութիւնը ձգտում է գրաւել Սվազի նահանգը:

Նրա առաւելութիւնները հետեւեալներն են.-

1. Ռուսաստանը ստանում է Էրզրումը, Բիթլիսը եւ Վանը՝ աննշան քանակութեամբ հայկական բնակչութեամբ, որովհետեւ «A» գոտին բացառապէս նեստորական եւ քրդական է, «B» գոտին զուտ քրդական է, «C» գոտին բնակեցուած է բացառապէս լազերով:

2. Ֆրանսիան ստանում է Հայաստանը, որպէս Հայաստան, եւ ֆրանսիական գոտին կը լինի հայկական ազգային զգացմունքի կենտրոն: Դա չափազանց ձեռնտու է Ռուսաստանին, որովհետեւ Փոքր Հայքի հայերն ունեն կղերական եւ պահպանողական տրամադրութիւններ ի տարբերութիւն կովկասեան հայերի եւ արեւելեան հայերի, որոնք անարխօ-սոցիալիստներ են: Եթէ հայկական ազգային զգացմունքի կիզակէտը լինի Էրզրումը, անարխօ-սոցիալիստներն իրենց ձեռքը կը վերցնեն հայկական քաղաքական ամբողջ մեխանիզմը եւ կ'ամրացնեն այն. իսկ այս դրութեան պայմաններում, չափաւոր տարրերը իրենց կ'ենթարկեն հայկական ազգային ձգտումները ֆրանսիական խնամակալութեան ներքոյ, որը կը տարածուի Փոքր Հայքից:

Հայկական չափաւոր շրջանակների նպատակը կը լինի զարգացումը սեփական սահմաններում եւ սահմանազատումը Կովկասի եւ Ադրբեջանի անարխօ-սոցիալիստներից, որոնց հետ նրանք երբեք չեն ցանկացել ընթանալ միասին:

Այնուհետեւ, ֆրանսիական գոտին իր մէջ է առնում Զէյթուն, Հաճըն, Դիարբեքիր, Մուֆարդին, Սվազ պատմական հայկական քաղաքները եւ այն մարզը, որտեղ իշխել է վերջին հայ թագաւորը, որին վիճակուած էր մահանալ Փարիզում, ինչպէս նաեւ ընդգրկում է խաչակրաց արշաւանքների դարաշրջանի Եդեսիոյ կոմսութիւնը, որտեղ թագաւորել է Գի Լուզինեանը: Դա որպէս մեկնակէտ նշանակութիւն ունի հայկական պատմական նացիոնալիզմի համար, որը մոռացել է Վանի եւ Էրզրումի ժողովրդական երգերն ու աւանդոյթները, որոնք

հայկական անարխօ-սոցիալիստական պրոպագանդայի գաղափարական հիմքերն են:

Այնուհետեւ, Փոքր Հայքի հայերը կապուած չեն Կովկասի հայ արդիւնաբերողների հետ եւ, իսկապէս, ընդհանուր քիչ բան ունեն նրանց հետ:

Ես անձամբ կ'ասէի, որ լաւ կը լինէր, եթէ հնարաւոր է, Մուշի դաշտավայրը մտցնել ֆրանսիական գօտու մէջ, որովհետեւ դա Ռուսաստանին կ'ազատէր յեղափոխական գործունէութեան օրրանից եւ կովկասեան յեղափոխականների պրոպագանդայի համար ամենապիտանի մարզերից մէկը կը կտրէր նրանց գործունէութեան ոլորտից:

Այս վերջինը, անշուշտ, աննշան մանրամասնութիւն է եւ նրա արժանիքներն ու թերութիւնները ենթակայ են քաղաքական եւ ռազմագիտական գործի գիտակների ուսումնասիրութեանը. քաղաքականապէս, ռուսական շահերից ելնելով լաւ կը լինէր, որ այդ մարզը ռուսական չլինէր, սակայն գտնուէր ռուսական հսկողութեան տակ:

Ես կարծում եմ, որ սրանք են այն գլխաւոր հարցերը, որոնք բարձրացուել են մեր երէկուայ զրոյցի ժամանակ»[24]:

Ինչպէս տեսնում ենք, Ռուսաստանի արտգործնախարարին ներկայացրած իր հիմնաւորումների մէջ Սայքսը բացառում է Հայաստանը թուրքական լծի տակ թողնելը՝ «հայկական վերջին կոտորածների ծայրայեղ դաժանութեան ու անգթութեան հետեւանքով» *եւ առաջ է քաշում Հայկական Հարցի լուծման մի քանի տարբերակներ: Նա բացասաբար է վերաբերւում հայկական պետականութեան վերականգնմանը, թէկուզ թուրքական գերիշխանութեան ներքոյ: Ինչպէս տեսանք, նախկինում եւս նա խուսափում էր Հայաստան անունով երկրի ստեղծումից, դա համարելով անհնար: Ըստ նրա, Հայաստանը կը դառնայ* «Կովկասում ինտրիգներ սարքող երկրորդ Բուլղարիա», *կամ էլ այդ պետութիւնը կենսունակ չի լինի, քանի որ հայերը չեն կարողանայ մրցակցել քրդերի հետ: Ռուսական զէնքի օգնութեամբ ազատագրուած Բուլղարիան, ինչպէս յայտնի է, յետագային հակառուսական դիրքորոշում որդեգրեց, բացի այդ, ռուսների առաջ փակեց Պոլիս տանող ճանապարհը, իբրեւ նաեւ Աշխարհամարտի մէջ մտաւ Քառեակ Դաշինքի կազմում: Ռուս բազմաթիւ գործիչներ այդ պատճառով զգուշօրէն էին մօտենում Կովկասին սահմանակից ինքնավար Հայաստանի ստեղծման գաղափարին, քանի որ այն կարող էր ինքնավարութեան ձգտումներ առաջացնել արեւելահայերի մէջ, ինչպես նաեւ փակել ռուսների ճանապարհը դէպի Մերձաւոր Արեւելք:*

«Երկրորդ Բուլղարիա»յի գաղափարը բազմիցս արծարծուել է որոշ ռուս գործիչների կողմից, բայց այստեղ հետաքրքիր է այն, որ նման հարց է բարձրացնում բրիտանացի դիւանագէտի կողմից: Այդ երբուանի՞ց են բրիտանացիները սկսել մտածել Ռուսաստանի ներքին անդորրը

պահելու եւ յատկապէս Կովկասի մասին։ Փաստօրէն, Սայքսը փորձում է որոշ ռուս գործիչների մօտ եղած թիւր կարծիքը պաշտպանել ու բարձրաձայնել, որպէսզի Սազոնովին համոզի իր տեսակէտների արդարացիութեան մէջ։ Այստեղ խնդիրը անկախ հայկական պետութիւն կազմաւորելուց խուսափելու եւ Սայքսին ցանկալի ծրագիրը իրականացնելու մէջ է, որը իսկապէս լուրջ հնարաւորութիւններ կը ստեղծէր հայութեանը յուզող խնդիրների լուծումը օգտագործել ռուս-ֆրանսիական յարաբերութիւնները բրիտանական շահերին համապատասխան խճճելու համար։

Նոյն կերպ նա անընդունելի է համարում միջազգային վերահսկողութեան տակ հայկական իշխանութեան ստեղծումը, որը իբր կը դառնայ մշտական բանսարկութիւնների ու խնդիրների պատճառ, որից յետագայում կարող է օգտուել Գերմանիան։ Իրականում, նա վստահ էր, որ միջազգային, այսինքն՝ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի վերահսկողութեան դէպքում, Հայաստանը կարող էր յայտնուել ռուսական ազդեցութեան տակ, քանի որ այդ տէրութիւնը սահմանակից էր, իսկ հայերի զգալի մասն ունէր ռուսական կողմնորոշում։

Աւելի հետաքրքիր մտավախութիւն է յայտնում, եթէ հայկական բոլոր տարածքները անցնեն Ռուսաստանին, որը, ինչպէս գիտենք, Բրիտանիայի համար բացարձակ անընդունելի էր։ Այդ դէպքում Սայքսի կարծիքով Ռուսաստանում, Պարսկաստանում եւ Թուրքիայում գործող հայկական յեղափոխական կազմակերպութիւնները կը միաւորուէին եւ վտանգաւոր կը դառնային։ Հայկական յեղափոխական կազմակերպութիւնների գլխաւոր նպատակը Արեւմտեան Հայաստանի ազատագրումն էր թուրքական դաժան տիրապետութիւնից, իսկ ինչ վերաբերում է նրանց ընկերվարական գաղափարներին, ապա դրանք երկրորդ տեղում էին։ Միաժամանակ, Հայաստանի միաւորումը չէր կարող պատճառ դառնալ, որ հայկական կուսակցութիւնները միաւորուէին, իսկ նրանց տարբեր երկրներում գործող կառոյցները առանց այդ էլ գործում էին միասնաբար։

Սայքսի վերոնշեալ բոլոր բացատրութիւնների գլխաւոր նպատակն այն է, որ ցոյց տայ հայկական հարցի լուծման «միակ ճշմարիտ ճանապարհը», որը յայտնի էր միայն իրեն եւ ձեռնտու էր բրիտանական շահերին։ Նա խնդրի լուծման տարբերակ է համարում Հայաստանի բաժանումը երկու մասի։ Այստեղ, բնականաբար, նա չի ներկայացնում այն բացասական հետեւանքները, որը կը բերէր Հայաստանի եւ հայ ազգի հերթական բաժանումը։ Ինչպէս յայտնի է, երբեւէ չի կարող երկրի ու ժողովրդի բաժանումը լինել խնդրի վերջնական լուծում, քանի որ այն աւելի մեծ խնդիրներ կարող է առաջացնել, որովհետեւ մշտապէս կը լինի միաւորման բնական ձգտումը։

Նա համոզմունք է յայտնում, որ Ռուսաստանին ձեռնտու կը լինի միացնել Էրզրումի, Վանի եւ Բիթլիսի նահանգները՝ «աննշան քանակութեամբ հայ բնակչութեամբ»։ Իբր այդ շրջաններում հայերը փոքրամասնութիւն էին, քանի որ որոշ շրջաններ ամբողջութեամբ բնակեցուած էին քրդերով, ասորիներով եւ լազերով։ Ինչպէս տեսնում ենք, ամենահայաշատ նահանգները նա համարում է աննշան քանակութեամբ հայեր պարունակող։ Այստեղ նա զարգացնում է թուրքական այն տեսակէտը, որ իբր Հայաստանում հայերը փոքրամասնութիւն են, կամ փորձում է արդարացնել պատերազմի ընթացքում թուրքերի իրականացրած ցեղասպանութեան հետեւանքները։

Ըստ նրա, Ֆրանսիային անցնելիք Կիլիկիայի, Խարբերդի, Դիարբեքիրի, Սեբաստիայի հիմքի վրայ պէտք է կազմաւորուէր բուն Հայաստանը։ Նրա կարծիքով, այդ դէպքում հայերի համար Հայաստանը կը համարուի ֆրանսիական գօտի։ Դա իբր ձեռնտու է Ռուսաստանին, քանի որ Փոքր Հայքի հայերն ունեն «կրօնական եւ պահպանողական տրամադրութիւններ» ի տարբերութիւն արեւելահայերի, որոնք «անարխօ-սոցիալիստներ» են։ Նա նշում է, որ հայկական չափաւոր շրջանների նպատակը կը լինի զարգանալ սեփական սահմաններում եւ անջատուել Կովկասի եւ Ատրպատականի անարխօ-սոցիալիստներից, «որոնց հետ նրանք երբեք չեն ցանկացել ընթանալ միասին»։ Ինչպէս տեսնում ենք, նա ռուսական կողմին անընդհատ վախեցնում է հայ ընկերվարականներով ու յեղափոխականներով։

Ժամանելով Պետրոգրադ, ապա մեկնելով ռուսական Կովկասեան ճակատ՝ Սայքսը ուշադրութիւն էր դարձրել Ռուսաստանում տիրող ներքին խմորումներին, որոնք ցանկացած պահի կարող էին վերաճել յեղափոխութեան[25]։ Այդ ներքին ծանր իրադրութիւնը, երբ ցարական իշխանութիւնների աչքին ամէն տեղ յեղափոխութեան վտանգ էր երեւում, բրիտանացի գործիչը փորձում էր օգտագործել եւ հայերին ներկայացնում էր որպէս անիշխանականներ ու ընկերվարականներ։

Միաժամանակ, նա Կովկասի հայ արդիւնաբերողների խնդիրն է առաջ քաշում, լաւ իմանալով, որ նրանք լուրջ մրցակից էին ռուս արդիւնաբերողների համար։ Ռուսական եւ վրացական մամուլում բազմիցս բարձրացուել էր Կովկասում հայկական դրամագլխի հետ մրցակցութեան հարցը եւ ռուս մեծպետական շատ գործիչներ չափազանց դժգոհ էին Անդրկովկասում հայ արդիւնաբերողների, առեւտրականների ու արհեստաւորների զբաղեցրած տնտեսական գերիշխող դիրքերից։

Ահա, Սայքսը իր ծրագրի արդարացիութիւնը ցոյց տալու եւ Սազոնովին համոզելու համար փորձում է ամէն կերպ վարկաբեկել հայերին։

Մարտի 15ին Սազոնովը Պիկոյին ներկայացնում է իր տեսակէտը, ըստ որի բացի Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի եւ Վանի նահանգներից Ռուսաստանին պէտք է անցնէր նաեւ Քրդստանի մարզը[26]։ Դրանով

արգելափակում էր Ֆրանսիայի ազդեցութեան գօտու սահմանակցումը Պարսկաստանին։ Դրա փոխարէն Ֆրանսիային առաջարկում էին Դիարբեքիրը, Խարբերդը, Սեբաստիան եւ Ազիզիէն[27]։ Պիկօն անակնկալի է գալիս, երբ ռուսական քարտէզի վրայ տեսնում է սահմանագծման հարցերի վերաբերեալ Սայքսի թողած ձեռագիր ծանօթագրութիւնները[28]։

Այդ լուծումը, ինչպէս տեսանք, ռուսներին առաջարկել էր Սայքսը եւ, փաստօրէն, մոռանալով գործընկերութեան մասին, Ֆրանսիային առաջարկներ էր անում ռուսների միջոցով՝ թիկունքից։

Ի վերջոյ, 1916 Մայիսի 16ին կայացած գաղտնի համաձայնութեամբ, որը յայտնի է Սայքս-Պիկոյի Պայմանագիր անունով, Հայաստանը բաժանւում է երկու մասի։ Ռուսաստանին պէտք է անցնէին Վանի, Բիթլիսի, Էրզրումի, Տրապիզոնի նահանգները, իսկ Ֆրանսիային՝ Կիլիկիան, Դիարբեքիրը, Խարբերդը, Սեբաստիան։

Դրանով բրիտանական դիւանագիտութիւնը արձանագրում է հերթական յաղթանակը. Ռուսաստանի դէպի հարաւ առաջխաղացման դէմ պատնէշ է կանգնեցւում Ֆրանսիայի միջոցով, իսկ Հայաստանի բաժանումով առիթ է ստեղծւում, որ յետագայում Հայկական Հարցը օգտագործուի ռուս-ֆրանսիական յարաբերութիւնները խճողելու համար։

*

1916 Ապրիլին դաշնակիցների քննարկման սեղանին էր դրուած դէպի Կիլիկիա ռազմարշաւ կազմակերպելու հարցը։ Այդ խնդրով անգլօ-ֆրանսիական կողմին էր դիմել Ռուսաստանը։ Ապրիլի սկզբին ռուսական կառավարութիւնը բրիտանական կառավարութեանը տեղեկացնում է, որ թուրքերը մեծ ուժեր են կուտակում Արեւմտեան Հայաստանում եւ պահանջում է Ալեքսանդրէտում կազմակերպել նրանց ուշադրութիւնը շեղող գործողութիւն, որպէսզի թուրքերն իրենց զօրքերի մի մասը ուղարկէին այդ ուղղութեամբ։ Կովկասի փոխարքայ (1916-1917), Կովկասեան բանակների հրամանատար, մեծ դուքս Նիկոլայ Նիկոլաեւիչ Ռոմանովը (Nikolay Nikolayevich Romanov, 1856-1929) երկիւղ ունէր, որ հակառակ դէպքում իր զօրքերը չեն կարողանայ պահել գրաւած տարածքները[29]։

Ապրիլի 6ին Փարիզում ռուսական դեսպանատունը պաշտօնապէս դիմում է նաեւ Ֆրանսիայի կառավարութեանը։ Նշւում էր, որ Սազոնովը հեռագրել է Գլխաւոր Շտաբի պետ գեներալ Միխայիլ Ալեքսէեւի (Mikhail Alekseyev, 1857-1918) կարծիքը, ըստ որի Փոքր Ասիայում Ռուսաստանի ձեռք բերած յաջողութիւնները պահպանելու համար անհրաժեշտ է թուրքերին թոյլ չտալ այդ ուղղութեամբ կուտակել խոշոր ուժեր։ Ռուսական հրամանատարութիւնն առաջարկում էր Սալոնիկում կամ Եգիպտոսում գտնուող դաշնակիցների զօրքերի մի մասով ցամա-

քահանում կատարել Ալեքսանդրէտում կամ Եումուրթալըքում։ Ըստ ռուսական բանակների գլխաւոր հրամանատարի շտաբի պետի, այդ գործողութիւնը վնաս չէր պատճառի վերոնշեալ ռազմաճակատներին, քանի որ սերբական բանակն արդէն տեղափոխուել էր բալկանեան թատերաբեմ, իսկ թուրքերը հրաժարուել էին եգիպտական ռազմարշաւից։ Սազոնովը Լոնդոնի ու Փարիզի ռուսական դեսպաններից պահանջում էր ամենայն լրջութեամբ դաշնակից կառավարութիւնների ուշադրութիւնը հրաւիրել այդ կարեւորագոյն նախագծի վրայ, որը չափազանց շահաւէտ էր Անտանտի երկրների համար[30]։

Սակայն Ապրիլի 7ին Ֆրանսիայի Ռազմական Նախարար գեներալ Պիէր Ռոքին (Pierre Roques, 1856-1920) ուղարկած հեռագրում Լոնդոնում Ֆրանսիայի ռազմական կցորդ գնդապետ Դը Լա Պանուսը յայտնում է, որ Ալեքսանդրէտում նոր ճակատ բացելու հարցի շուրջ զրուցել է Մեծ Բրիտանիայի Ռազմական Նախարար լորդ Քիչնըրի հետ, որը տեղեկացրել է, որ իրենց զօրքերի սակաւութեան պատճառով նման գործողութիւն իրականացնելն անհնար է։ Քիչնըրի կարծիքով զօրքերի ցրումը տուեալ պահին սխալ կը լինի, քանի որ արեւմտեան ռազմաճակատում թէժ մարտեր էին ընթանում եւ անհրաժեշտ էր դաշնակցային բոլոր բանակների առաւելագոյն համախմբում[31]։

Այս հարցի շուրջ բրիտանական ու ֆրանսիական իշխանութիւններին իր տեսակէտը ներկայացրել է նաեւ Սայքսը։ Նա նոր էր վերադարձել Պետրոգրադից, ուր, ինչպէս տեսանք, Պիկոյի հետ ռուսական կառավարութեանն էին ներկայացրել Մերձաւոր Արեւելքը ազդեցութեան գօտիների բաժանելու նախագիծը։ Նա Պետրոգրադից մեկնել էր Կովկաս, 4-5 օր մնացել էր Նիկոլայ Նիկոլաեւիչի շտաբում։ Նա համամիտ էր մեծ իշխան Նիկոլայի ու գեներալ Ալեքսէեւի առաջարկներին, գտնում էր, որ Ալեքսանդրէտում ցամաքահանումը թուրքերին կը ստիպի զօրքերի մի մասն ուղարկել այդ ուղղութեամբ եւ նրանք չեն կարողանայ ռուսներին գերակշռող ուժեր կենտրոնացնել Հայաստանում։ Սայքսը մտավախութիւն ունէր, որ թուրքերը կը կարողանային արդէն Մայիս կամ Յունիս ամիսներին 350,000-400,000 զինուոր կենտրոնացնել Երզնկա-Դիարբեքիր շրջանում եւ յաջող յարձակում կազմակերպել, որոնց ռուսական փոքրաթիւ բանակները միայն թոյլ դիմադրութիւն կարող էին ցուցաբերել։ Մեծ դուքս Նիկոլայը Սայքսին յայտնել էր, որ եթէ դաշնակիցների օգնութիւնը չլինի, ապա ամրանը ռուսները կը կորցնեն ոչ միայն Թիֆլիսը, այլեւ դուրս կը մղուեն ամբողջ Կովկասից։

Սայքսը չնայած դեռեւս 1915ի աշնանը Ալեքսանդրէտում ցամաքահանում կատարելու ջերմեռանդ կողմնակիցներից էր, սակայն այժմ գտնում էր, որ նման գործողութիւնը այդ պահին կը ձախողուէր, քանի որ դաշնակիցները ծովային անհրաժեշտ փոխադրամիջոցներ չունէին, իսկ ամրանը դեսանտային կորպուսը նօսրացած կը լինէր հիւանդու-

թիւնների պատճառով։ Նման գործողութեան ամենայարմար պահը նրա կարծիքով Հոկտեմբերն էր։ Նման պայմաններում Սայքսը հարցի լուծում էր համարում Սուէզի ջրանցքից դէպի Պաղեստին ռազմարշաւի իրականացումը։ Նա համոզուած էր, որ պէտք է Եգիպտոսում լուրջ նախապատրաստական աշխատանքներ կատարել եւ յանկարծակի յարձակուել Պաղեստինի ուղղութեամբ։ Սայքսը համոզուած էր, որ Կովկասում ռուսների պարտութիւնը չափազանց ծանր հետեւանքներ կ՝ունենայ Ռուսաստանի ներքին դրութեան համար, որը արդէն գտնւում էր վատթար վիճակում[32]։ Սայքսը զգուշացնում էր, որ ռուսական բանակի պարտութիւնը կարող է յանգեցնել խմորումների, որոնք առանց դժուարութեան կը վերաճեն յեղափոխութեան[33]։

Սակայն ֆրանսիական իշխանութիւնները գտնում էին, որ նոր ճակատի բացումը կը թուլացնի արեւմտեան ռազմաճակատը, որտեղ եւ վճռուելու էր պատերազմի բախտը։ Իսկ բրիտանական իշխանութիւնները համոզուած էին, որ 1916ի ամրանը Թուրքերը Հայաստանում կը կարողանային կենտրոնացնել ամենաշատը 200,000-250,000 զինուոր, որոնց դիմադրելու համար ռուսները ունէին բաւարար ուժեր, իսկ տեղանքը նպաստաւոր էր պաշտպանութիւն կազմակերպելու համար[34]։

Ֆրանսիայի վարչապետ եւ Արտգործնախարար Արիստիդ Բրիանը (Aristide Briand, 1862-1932) Սայքսի առաջարկները ներկայացնում է նաեւ ֆրանսիական արեւմտեան բանակների գլխաւոր հրամանատար զօրավար Ժոզէֆ Ժոֆրի (Joseph Joffre, 1852-1931) ուշադրութեանը։ Սակայն վերջինս համոզուած էր, որ բրիտանացիները ի վիճակի չեն լինի ամրանը ռազմական գործողութիւններ կազմակերպել Սինայի թերակղզում, քանի որ չունեն բաւարար թուով փոխադրամիջոցներ։ Զօրավարի կարծիքով Պաղեստինի ուղղութեամբ յաջողութեան հասնելու համար բրիտանացիները պէտք է ամրանը անապատային տեղանքում կառուցէին 140 կմ. երկարութեամբ երկաթուղագիծ, որը անհնար էր իրականացնել։ Իսկ Ապրիլի սկզբին Կիլիկիայի երկաթուղիների վրայ Պորտ Սաիդի հայերի ուժերով յարձակումներ կազմակերպելու ծրագրից, զօրավարը յիշեցնում էր, որ հրաժարուել էին եգիպտահայ թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակեանի (1874-1939) պահանջով, որպէսզի խուսափէին հայկական նոր ջարդերից։ Ժոֆրը գտնում էր, որ Փոքր Ասիայի ափերի մօտ պէտք է սահմանափակուեն միայն ծովային գործողութիւններով, իսկ եթէ այնուամենայնիւ որոշուէր ցամաքահանում կատարել, ապա դա պէտք է արուէր ոչ թէ անկանոն հայկական զօրամասերով, այլ դաշնակիցների զօրքերի միջոցով, որոնց միացուելու էին նաեւ հայկական ջոկատները[35]։

1916ի աշնանը ֆրանսիական իշխանութիւնները որոշում են Կիպրոսում կազմաւորել հայկական կամաւորական բանակ։ Դա պայմանաւորուած էր դրանով, որ ֆրանսիացիները արեւելքում բաւարար ուժեր

չունէին, որպէսզի անհրաժեշտ պահին գրաւէին Սայքս-Պիկոյի Պայմանագրով իրենց բաժին հասած հայկական տարածքները եւ Սիրիան։ Նման պայմաններում նրանք որոշում են ստեղծել հայկական զօրամաս, որը կռուելու էր Ֆրանսիական դրօշի ներքոյ։

Հայկական կողմի հետ համաձայնութիւն կայացնելու նուրբ գործը յանձնարարւում է Պիկոյին։ Վերջինս պէտք է բանակցէր Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուբար փաշայի (1851-1930) *հետ։ Բանակցութիւնների վայր է ընտրւում Լոնդոնը։ Դրանց մասնակցելու է հրաւիրւում նաեւ Սայքսը։*

Նախքան Պիկոյի հետ հանդիպելը Նուբարը 1916 *Հոկտեմբերի* 24*ին տեսակցում է Սայքսի հետ։ Ներկայ է լինում նաեւ Ազգային Պատուիրակութեան անդամ, լոնդոնաբնակ իրաւաբան Յարութիւն Մոստիչեանը։ Սայքսը տեղեկացնում է, որ Բրիտանիայի, Ֆրանսիայի եւ Ռուսաստանի միջեւ համաձայնագիր է կնքուել, որով Վանը, Բիթլիսը, Էրզրումը եւ Տրապիզոնը անցնելու են Ռուսաստանին, իսկ Սիրիան, Կիլիկիան, Սեբաստիան, Դիարբեքիրը, Խարբերդը՝ Ֆրանսիային։ Վստահեցնում է, որ վերջինի հովանու ներքոյ կը ստեղծուի ինքնավար Հայաստան, որը կը ներառի նաեւ Ալեքսանդրէտն ու Այնթապը եւ կը ղեկավարուի որեւէ իշխանի կողմից։*

Սայքսը նշում է, որ հայերը պէտք է կազմաւորեն բանակ, որպէսզի աւելի մեծ իրաւունքներ ապահովեն։ Նա բացատրում է, որ կարիք չկայ Կիպրոսում մեծ թուով կամաւորներ կենտրոնացնել, այլ միայն՝ մէկ գումարտակ, իսկ Ֆրանսիայից եւ Ամերիկայից եկող կամաւորները կարող են մարզուել Ֆրանսիայում, քանի որ մէկ տարուց չուտ ցամաքահանում չի կատարուի։ Սայքսը նշում է, որ եթէ նոյնիսկ Կիլիկիայում ցամաքահանում չկատարուի, ապա պատերազմից յետոյ, երբ բանակները զօրացրուեն, հայ կամաւորները կը փոխարինեն գրաւող զօրքերին։ Նկատի առնելով բռնութիւնները, որոնք սպասւում են որպէս փոխազդեցութիւն, ապա թուրքերը դրանից կը հրաժարուեն եւ կը հնազանդուեն նման ուժի ցուցադրման առաջ։ Նա նշում է, որ Ռուսաստանը եւս կողմ կը լինի հայերի համախմբմանը Կիլիկիայում, քանի որ «այնտեղի հայերը պահպանողական են՝ ի տարբերութիւն յեղափոխականօրէն տրամադրուած կովկասահայերի»[36]։

Նոյն օրը Նուբարը հանդիպում է նաեւ Պիկոյի հետ։ Վերջինս նշում է, որ պատերազմի գլխաւոր նպատակը ճնշուած ժողովուրդների ազատագրումն է, որոնց թուին են պատկանում նաեւ հայերը։ Նա հարցնում է, թէ հայերը ի՞նչ զոհողութիւնների են պատրաստ, ինքնավար Հայաստան ստեղծելու համար եւ աւելացնում, որ մի քանի հազար կամաւորները դրական հասարակական կարծիք կը ստեղծեն Ֆրանսիայում։ Նուբարը կողմ է արտայայտւում հայ կամաւորների մասնակցութեանը պատերազմին, որոշ զգուշութիւնների կիրառումով, որպէսզի թուրքե-

ը նոր ջարդեր չկազմակերպէին։ Պիկօն համաձայնում է նրա հետ։ Հայ գործիչն առաջարկում է, որ Ֆրանսիական կառավարութիւնը յայտարարի Արտասահմանեան Լեգէոնում հայ կամաւորների գերազանց մասնակցութեան մասին եւ սկսի նոր կամաւորագրութիւն, որից յետոյ խոստացաւ քայլեր ձեռնարկել այն խրախուսելու համար, յատկապէս, եթէ կառավարութիւնը պատրաստակամութիւն յայտնի Ֆրանսիայի քաղաքացիութիւն տալ այդ կամաւորներին։ Պիկօն խոստանում է պաշտպանել այդ առաջարկները։ Նուբարը խնդրում է, որ կամաւորագրուեն նաեւ Կովկաս գաղթած արեւմտահայերը, ինչպէս նաեւ այն 4,000-5,000 *արեւմտահայ ռազմագերիները, որոնք ռուսների կողմից գերուել եւ ուղարկուել էին Սիբիր։ Պիկօն խոստանում է ուսումնասիրել նաեւ այդ հարցը եւ պատասխանել յաջորդ հանդիպման ժամանակ, միաժամանակ խնդրելով իրեն տրամադրել Ֆրանսիայում կռուող հայ զինուորների ցուցակը*[37]։

Փաստօրէն, Սայքս-Պիկօ Պայմանագրով Հայաստանի զգալի մասը անցնելու էր Ֆրանսիային։ Հայ գործիչները ստիպուած էին ընդառաջել հայկական կամաւորական բանակ ստեղծելու Ֆրանսիական իշխանութիւնների առաջարկին, յուսալով, որ պատերազմից յետոյ հայերին կը տրուի ինքնավարութիւն՝ Ֆրանսիական հովանաւորութեան ներքոյ։ Օգտուելով առիթից, Նուբարը փորձեց ռուսական, ինչպէս նաեւ բրիտանական ճամբարներից ազատել թուրքական բանակի հայ ռազմագերիներին։

Հոկտեմբերի 26ին Նուբարը Սայքսի ուղեկցութեամբ հանդիպում է Մեծն Բրիտանիայի Արտգործնախարար դերկոմս Էդուըրդ Գրէյի (Edward Grey, 1862-1933) *հետ։ Ազգային Պատուիրակութեան նախագահը նրան ներկայացնում է կաթողիկոսի կոնդակը, որով ինքը համարւում է Գէորգ Ե.ի միակ ներկայացուցիչը բրիտանական կառավարութեան մօտ։ Նուբարը յոյս է յայտնում, որ Բրիտանիան եւ նրա դաշնակիցները կ՚ազատագրեն հայերին թուրքական լծից եւ ինքնավարութիւն կը շնորհեն Կիլիկիայում։ Գրէյը խուսափողաբար պատասխանում է, որ մինչեւ պատերազմի աւարտը որեւէ որոշում ընդունել վաղ է, սակայն աւելացնում է, որ հայերը կարող են յուսալ, որ իր կառավարութիւնը ամէն ինչ կ՚անի լուծելու Հայկական Հարցը*[38]։

Հոկտեմբերի 27ին Նուբարը եւ Պիկօն պէտք է վերջնականապէս ճշտէին լեգէոնի կազմաւորման պայմանները։ Մինչեւ նրա մօտ գնալը Նուբարը Յարութիւն Մոստիչեանի եւ լոնդոնաբնակ հայ գործիչ Ջէյմս Մալքոլմի[39] (James Malcolm, 1867-1952) *ուղեկցութեամբ կէսօրին հանդիպում է Սայքսին՝ վերջինիս առաջարկութեամբ։*

Բրիտանացի դիւանագէտը առաջարկում է Ֆրանսիայից պահանջել հետեւեալը.-

ա.) կամաւորներին վճարել,

բ.) երաշխիքներ ստանալ, որ հայ կամաւորները չեն կռուի Ֆրանսիայում, այլ կ՝ուղարկուեն իրենց գերադասած ճակատը,
գ.) պահանջել, որ հայ կամաւորները բուժուեն Ամերիկեան Կարմիր Խաչի կենտրոններում, քանի որ Ֆրանսիացիները լաւ չէին բուժում։

Սայքսը նշում է, որ եթէ Ֆրանսիան կարողանայ ապահովել հայ քաղաքական ուժերի համագործակցութիւնը, ապա հնարաւոր կը լինի մինչեւ 1917 Յունիս-Յուլիս ամիսները հաւաքել 30.000 հայ կամաւորներ։ Նա համոզմունք է յայտնում, որ Պիկօն չի մերժի այդ պայմանները, քանի որ Ֆրանսիան մարդուժի կարիք ունի։ Սայքսը պարզաբանում է, որ այդ պայմանները պէտք է հաստատել տալ, քանի որ Ֆրանսիան շատ ծանր վիճակում է եւ կարող է հայ կամաւորներին ուղարկել ֆրանսիական ռազմաճակատ։ Նա ներկայացնում է մի շարք օրինակներ, երբ ֆրանսիացիները խախտել էին դաշնակիցներին տրուած խոստումները։

Նուբարը տեղեկացնում է, որ Պիկոյից պահանջել է, որպէսզի կառավարութեան պաշտօնաթերթում յայտարարուի Ֆրանսիայի Արտաքսահմանեան Լեգէոնում հայ կամաւորների դրական մասնակցութեան եւ նոր կամաւորագրութեան մասին։ Սայքսն առաջարկում է դրա փոխարէն պահանջել, որ Ֆրանսիայի Ազգային Ժողովում վարչապետ Արիստիդ Բրիանը դրականօրէն արտայայտուի ֆրանսիական բանակի հայ կամաւորների մասին եւ յայտարարի, որ պատերազմից յետոյ Ֆրանսիան բաւարարելու է հայկական պահանջները[40]։

Ապա Նուբարը, Մոստիչեանը, Մալքոլմը եւ Սայքսը միասին մեկնում են Պիկոյի մօտ։ Նուբարը տեղեկացնում է, որ Եգիպտոսում կարող են հաւաքագրել աւելի քան 1,000 կամաւորների եւ Կիպրոսում կազմաւորել մէկ գումարտակ։ Այդ լուրը ուրախացնում է Պիկոյին։ Քննարկւում է նաեւ Ամերիկայից ու Ռուսաստանից կամաւորներ հաւաքագրելու հարցը։ Պիկօն եւ Սայքսը յոյս ունէին, որ ռուսական կառավարութիւնը դրական կը վերաբերուի Սիբիրի հայ ռազմագերիներին եւ Կովկասի արեւմտահայ գաղթականներին կամաւորագրելուն։ Նրանց Վլադիւոստոկի եւ Կանադայի վրայով պէտք է տեղափոխէին Ֆրանսիայի հարաւ՝ մարզուելու համար։ Ամերիկայի Միացեալ Նահանգների կամաւորներին մարզելու էին Կանադայում, ուր տեղափոխելու էին ֆրանսիական կառավարութեան միջոցներով։

Նուբարը հարցնում է Պիկոյին, թէ արդեօք կամաւորագրութիւնը խրախուսելու համար կարո՞ղ են յայտարարել, որ կամաւորները վճարուելու են, որպէսզի կարողանան հոգալ իրենց ընտանիքների կարիքները։ Պիկօն փորձում է հարցից խուսափել եւ նշում, որ ֆրանսիացի զինուորները օրական միայն 5 սու են ստանում եւ կռւում են ոչ փողի համար։

Սայքսը միջամտում եւ պարզաբանում է, որ պէտք է հաշուի առնել այն հանգամանքը, որ ամերիկահայերը օրական վաստակում են 2 դո-

լարից աւելի, եւ գումարներն անհրաժեշտ են ոչ թէ կամաւորների անձնական կարիքների, այլ նրանց ընտանիքների ապրուստի համար։ Նա մատնանշում է, որ հայերը Ֆրանսիացիների նման խնայող են եւ փողերը կ՝ուղարկեն ընտանիքներին։ Բացի այդ, գումարները ուղղակիօրէն կարող են տրուել նրանց կանանց կամ ընտանիքներին։

Պիկօն համաձայնւում է, որ եթէ հարցը դիտեն այդ տեսանկիւնից, ապա այն բաւական հիմնաւոր է եւ խոստանում է ուսումնասիրել ու աջակցել այդ խնդրի լուծմանը, չնայած մտավախութիւն ունէր, որ լուրջ դժուարութիւնների կը հանդիպի Ֆրանսիայում։

Նուբարը բարձրացնում է կամաւորագրութեան մասին ֆրանսիական կառավարութեան յայտարարութեան հարցը, որը նախորդ հանդիպման ժամանակ խոստացել էր պաշտպանել նաեւ Պիկօն։ Նուբարը նշում է, որ անհրաժեշտ է, որ կառավարութիւնը յայտարարի Ֆրանսիական բանակում նոր հայ կամաւորներ ներգրաւելու մասին, նշելով, որ ամբողջովին բաւարարուած է հայ կամաւորների գործունէութեամբ Մառնում, Վերդէնում եւ Սոմում։

Մալքոլմը հարցնում է վարչապետ Բրիանի կողմից Ազգային Ժողովում Հայաստանի մասին յայտարարութիւն անելու հնարաւորութեան մասին։ Սայքսը երկրորդում ու պաշտպանում է այդ խնդիրը եւ առաջարկում, որ Բրիանը յայտարարի, որ պատերազմի յաղթական աւարտից յետոյ արդարութիւն կը հաստատուի հայերի համար։ Սակայն Պիկօն յայտնում է, որ նման յայտարարութիւնը անօգուտ քննարկումների առիթ կը դառնայ Ազգային Ժողովում եւ աւելի ճիշտ է համարում, որ վարչապետը յայտարարութիւն անի Արտաքին Յարաբերութիւնների յանձնաժողովներից մէկում եւ մամուլում։ Սայքսը տեղեկացնում է, որ շուտով ինքը նմանատիպ յայտարարութեամբ հանդէս է գալու բրիտանական խորհրդարանում։

Անդրադառնալով ցամաքահանման հնարաւորութեանը, Պիկօն նշում է, որ ինքը դրան սպասում է պատերազմի սկզբից ի վեր եւ իր կառավարութեան կողմից հաւաստիացում է ստացել, որ ասիական Թուրքիայում ցամաքահանման դէպքում ինքն է գլխաւորելու ռազմարշաւը։

Սայքսը հայերի ռազմական կարողութիւնների վերաբերեալ նշում է, որ նրանք աշխարհի լաւագոյն զինուորներն են, բայց ինչ վերաբերում է ներքին կազմակերպուածութեանը, նրանք դեռ երկար ճանապարհ ունեն անցնելու։ Այդ կարծիքը մեղմելու համար Նուբարը ուշադրութիւն է հրաւիրում Ֆրանսիայի հայ կամաւորների քաջութեան, իսկ Մոստիչեանը ներկայացնում է թուրք գեներալների եւ անձամբ Ռազմական Նախարար Էնվէրի (1881-1922) տեսակէտները Բալկանեան պատերազմի ժամանակ հայ զինուորների քաջութեան մասին, ինչպէս նաեւ նկարագրում է 1909ի Ադանայի կոտորածի ժամանակ հայերի ցոյց

տուած յամառ ու յաջող դիմադրութիւնը թուրք ջարդարարներին, երբ վերջիններս ստիպուած եղան անգլիական հիւպատոսի միջնորդութեամբ համոզել հայերին զինաթափուել՝ խոստանալով ապահովել նրանց անվտանգութիւնը եւ միայն դրանից յետոյ դրժելով խոստումը կարողացան իրականացնել իրենց ոճրագործութիւնը։

Նուբարը Պիկոյի ուշադրութիւնը հրաւիրում է այն խնդրի վրայ, թէ ո՞ր ճակատում են կռուելու հայ կամաւորները։ Նա նշում է, որ փոքր թուով կամաւորներ կ՚արձանագրուեն, եթէ նրանք վստահ չլինեն, որ կռուելու են իրենց դարաւոր թշնամու դէմ՝ հայրենի հողը ազատագրելու համար։ Պիկօն դա բնական համարելով համաձայնւում է, բայց յետագայ անճշտութիւններից խուսափելու համար հարցնում է, թէ արդեօք այդ պայմաններին կը հակասի՞, եթէ թուրքերին հարուածեն Սիրիայում, Զմիւռնիայում կամ Բալկաններում։ Նուբարը նշում է, որ իրենց նպատակը Հայաստանի ազատագրութիւնն է, բայց ռազմավարական տեսանկիւնից Սիրիայում կամ Փոքր Ասիայում ռազմական գործողութիւններին մասնակցելուն կողմ է, սակայն հայ կամաւորներին Բալկաններ ուղարկելուն՝ կտրականապէս դէմ։ Պիկօն ընդունելի է համարում Նուբարի տեսակէտերը։

Ապա Նուբարն անդրադառնում է ինքնավարութեան հարցին, ու նշում, որ կամաւորագրութիւնը խրախուսելու լաւագոյն միջոցը այն է, որ իրենք վստահ լինեն, որ պատերազմից յետոյ Ֆրանսիան իրեն անցած հայկական տարածքներին ինքնավարութիւն կը տայ եւ հայ ժողովրդի համար զարգացման բաւարար պայմաններ կը ստեղծի։ Պիկօն ամբողջութեամբ իր համաձայնութիւնն է յայտնում Նուբարին եւ թոյլ է տալիս իր անունից վստահեցնել կամաւորներին, որ Կիլիկիային ինքնավարութիւն է տրուելու։

Որոշւում է, որ Նուբարը հեռագիր կ՚ուղարկի Եգիպտոսում գտնուող որդուն՝ Առաքելին, չտապեցնելով անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել խրախուսելու կամաւորագրութիւնը։ Նա պէտք է տեղեկացնէր այն հաւաստիացման մասին, որ վերջնական յաղթանակից յետոյ Դաշնակիցներն ամբողջութեամբ բաւարարելու են հայկական ձգտումները։ Յաջորդ օրը Նուբարը հեռագիրը տրամադրելու էր Պիկոյին, որպէսզի ուղարկէր Կահիրէի ֆրանսիական դեսպան Դեֆրանսի շիֆրով, իսկ պատճէնը Սայքսին էր տրուելու, որպէսզի ուղարկէր Կահիրէի բրիտանական ներկայացուցչին։

Այսպիսով, երկար քննարկումից յետոյ նրանք համաձայնութեան են գալիս հետեւեալ պայմանների շուրջ.

1. Կամաւորագրութեան կոչը պէտք է հրապարակի Ֆրանսիայի կառավարութիւնը, իսկ Պիկօն ապահովելու է յայտարարութիւն վարչապետ Բրիանի կողմից։

2. Պիկօն եւ Սայքսը անհրաժեշտ քայլեր են ձեռնարկելու Ռուսաստանի կառավարութեան մօտ, որպէսզի ապահովեն Սիբիր աքսորուած արեւմտահայ ռազմագերիների եւ Կովկասի արեւմտահայ գաղթականների կամաւորագրութիւնն ու մեկնումը։
3. Ամերիկայում կամաւորների հաւաքագրումը կատարուելու է Կանադայում եւ Ֆրանսիայի կառավարութիւնը ապահովելու է նրանց տեղափոխութեան ծախսերը։
4. Պիկօն պէտք է փորձի ապահովել, որ հայ կամաւորները ստանան օրական մէկ դոլար իրենց ընտանիքների համար։
5. Կամաւորները չեն կռուելու Ֆրանսիայում կամ եւրոպական որեւէ ճակատում եւ օգտագործուելու են միայն ասիական Թուրքիայում ցամաքահանում կատարելիս՝ կռուելու իրենց դարաւոր թշնամու դէմ եւ ազատագրելու իրենց հայրենիքը։
6. Ֆրանսիան երաշխաւորելու է, որ յաղթանակից յետոյ ինքնավարութիւն կը շնորհի Կիլիկիային եւ երեք վիլայէթներին (Սեբաստիա, Խարբերդ, Դիարբեքիր) իր հովանու ներքոյ։
7. Նուբարը հեռագիր էր ուղարկելու Եգիպտոս՝ խրախուսելու կամաւորագրութիւնն ըստ որոշուած պայմանների։

Պիկօն եւ Սայքսը հաստատում են իրենց լրիւ համաձայնութիւնը այդ բոլոր կէտերի վերաբերեալ[41]։

Ինչպէս տեսնում ենք, Սայքսը խոշոր մասնակցութիւն է ունեցել Հայկական Լեգէոնի կազմաւորման շուրջ Նուբարի եւ Պիկոյի լոնդոնեան բանակցութիւններում եւ բաւական օգտակար խորհուրդներ է տուել հայ պատուիրակներին։

1916ի Դեկտեմբերից Կիպրոսում կազմաւորուեց Հայկական Լեգէոնը, որը, ինչպէս յայտնի է, կարեւոր մասնակցութիւն ունեցաւ Պաղեստինեան ռազմաճակատում 1918 Սեպտեմբերին թուրքական բանակի ջախջախման գործում, մասնակցեց Պաղեստինի, Սիրիայի, Կիլիկիայի ազատագրմանը։ Նրա պաշտպանութեան տակ Կիլիկիա վերադարձան Մեծ Եղեռնից փրկուած մօտ 150.000 հայեր։ Լեգէոնը մեծ դեր ունեցաւ 1919-1920ի Կիլիկիայում թուրքական յարձակումներին դիմադրաւելու եւ հայ բնակչութեան ինքնապաշտպանութիւնը կազմակերպելու գործում։ Աւաղ, 1920ի ամրանը ֆրանսիական իշխանութիւնները կազմալուծեցին այդ հայկական զօրամասը եւ չկատարեցին պատերազմի տարիներին տրուած ինքնավարութեան խոստումը։ Աւելին, նրանք այդ հայկական երկրամասը զիջեցին թուրքերին, որի հետեւանքով այն հայաթափուեց, իսկ կիլիկիահայութիւնը ստիպուած էր կրկին վերցնել գաղթականի ցուպը։

1916 Հոկտեմբերի 31ին Լոնդոնում Նուբարը ճաշի էր հրաւիրուած Սայքսի նստավայրում, ուր ներկայ էր Կ.Պոլսի բրիտանական դեսպանատան նախկին առաջին թարգման Ջերըլդ Ֆիցմորիսը (Gerald

Fitzmaurice, 1865-1939)։ *Զրույցի ժամանակ Սայքսը սխալ է համարում ռազմական գործողությունները Դարդանելում եւ Սալոնիկում, առարկելով թէ՝* «Որպէսզի պարտութեան մատնեն թուրքերին եւ ծանր հարուած հասցնեն գերմանացիներին, անհրաժեշտ է զօրքեր ցամաքահանել Ալեքսանդրէտում: Դա կը կտրի նրանց երկաթուղային հաղորդակցութեան համակարգը, եւ նրանք շուտով պարտութեան կը մատնուեն ռուսների օգնութեամբ, որոնք գալիս են արեւելքից»[42]։ *Դաշնակից երկրները պատերազմի ընթացքում բազմիցս քննարկում են Ալեքսանդրէտում կամ Կիլիկիայի այլ շրջանում ցամաքահանում կատարելու խնդիրը, սակայն դա այդպէս էլ մնում է միայն թղթէ նախագիծ։*

1918*ին հրատարակուած իր գրքոյկում Սայքսը ցոյց է տալիս մերձարեւելեան խնդրի արդարացի լուծման հնարաւորութիւնները։ Այստեղ նշում է, որ հայերը Օսմանեան կայսրութիւնում դարեր շարունակ կեղեքուել են, որ հայերի հետ դաժանօրէն են վարուել, եւ որ բացի հայերից, միւս թուրքահպատակ ժողովուրդները դեռեւս պատրաստ չեն պետականութեան*[43]։

Փաստօրէն, նա արդէն եկել էր այն եզրայանգմանը, որ հայ ազգը իրաւունք ունի ստեղծելու սեփական պետականութիւնը։ Դրան հաւանաբար նպաստել էր պատերազմի ժամանակ հայերի ցոյց տուած հերոսական պահուածքը՝ ա) Հայկական Լեգէոնի կազմաւորումը եւ նրա ցուցաբերած բարձր մարտունակութիւնը Պաղեստինում, բ) Կովկասի հայ կամաւորական շարժումը, գ) բոլշեւիկեան յեղափոխութեան հետեւանքով ռուսական բանակի Կովկասեան Ռազմաճակատից հեռացումից յետոյ, հայկական փոքրաթիւ ուժերի յամառ դիմադրութիւնը թուրքական գերակշիռ ուժերին՝ Արեւմտեան Հայաստանում, Արարատեան դաշտում եւ Բաքուում (1918 *Յունուարից մինչեւ Սեպտեմբեր)։ Այս ամէնը դաշնակիցների աչքին բարձրացրել էր հայերի վարկը, որպէս կռուող ու մարտունակ ազգ։*

1918 *Հոկտեմբերի* 31*ին Հռոմի «Էքսելսիոր» ճաշարանում Ազգային Պատուիրակութեան ներկայացուցիչ Միհրան Տամատեանը եւ Իտալիայի Հայկական Կոմիտէն թէյասեղան էին կազմակերպել, որին ներկայ էին նախարարներ, ծերակուտականներ, պատգամաւորներ, բարձրաստիճան պաշտօնատարներ, թղթակիցներ։ Ներկաները հանդէս էին գալիս հայանպաստ ելոյթներով։ Սակայն մէկ օր առաջ կնքուել էր Մուդրոսի Զինադադարը, որը դժգոհութեամբ ու վրդովմունքով էր ընդունուել հայերի կողմից, քանի որ հայութեան շահերը ոչ միայն հաշուի չէին առնուել զինադադարի պայմանագրում, այլեւ ոտնահարուած էին։ Այն քննադատող խիստ ելոյթով հանդէս է գալիս Տամատեանը*[44]։

Ներկաների մէջ էր նաեւ Սայքսը։ Տամատեանից յետոյ նա խօսք է խնդրում, եւ ի միջի այլոց ասում. «Այս պատերազմին մէջ մենք ամէնքս տառապեցանք: Անգլիա տառապեցաւ, Ֆրանսա տառապե-

ցաւ, Ռուսիա, Իտալիա՝ նմանապէս, Պելճիքա, Սերպիա, Ռումինիա տառապեցան, բայց Հայաստա՞նը…»։ (Ատենախօսը չշարունակեց։ Անոր այս լռութիւնը ոչ միայն խորհրդաւոր եւ նշանակալից էր, այլեւ ամէն խօսքէ աւելի պերճախօս ու սրտայոյզ։ Այս լռութիւնը խորունկ սարսուռ մը յառաջացուց ընդհանուր հանդիսականներուն մէջ),- *գրում է Տամատեանը, ապա չարունակում*,- վայրկեան մը ետք, տարբեր շեշտով խօսքը շարունակելով՝ ատենախօսը նկարագրեց հայերուն մարտիրոսագրութիւնը։ Յետոյ խօսելով հայերուն հայրենասիրութեան եւ անոնց դէպի Դաշնակիցները հաւատքին ու հաւատարմութեան վրայ, պատմեց թէ ինչպէս Մուսա Լերան հայ կտրիճները՝ որոնք յուսահատ դիմադրութիւնէ մը ետք յաջողած էին ֆրանսական նաւատորմին օժանդակութեամբ Փորթ-Սայիտ ապաստանիլ, ամէնքը՝ առանց բացառութեան՝ փութացին կամաւոր արձանագրուիլ, երբ ֆրանսացի եւ անգլիացի սպաներ իրենց աւետեցին թէ Հայկական Լեգէոն մը պիտի կազմուի։ Պատմեց նոյնպէս թէ ինչպէս Միջագետքի թրքական բանակէն գերի բռնուած եւ Հնդկաստանի քաղաքի մը մէջ կեդրոնացուած հայ զինուորները, երբ իմաց տրուեցաւ թէ՝ եթէ իրենց մէջէն փափաքողներ կան՝ կրնան կամաւոր արձանագրուիլ, ամէնքը միահամուռ, առանց որեւէ բացառութեան, արձանագրուեցան, չնայելով որ օսմանեան բանակի մէջ իրենց զինուորութեան շրջանին անհնարին զրկանքներու ենթարկուած էին ու իրենցմէ ոմանք, դեռ իրենց վէրքերը կը դարմանէին, իսկ ոմանք ալ հիւանդ ու տկար էին։ «Ահա,- աւելցուց,- այս անձնուէր հայ կամաւորներէն կազմուած Հայկական Լեգէոնն էր որ՝ ղեկավարութեամբ ֆրանսացի սպաներու՝ մասնակցեցաւ Պաղեստինի ճակատի կռիւներուն՝ Զօրավար Ալենպիի անգլիական բանակին կողքին։ Եւ երբ նկատի առնեն կովկասեան ճակատի ռուս բանակին մաս կազմող 150,000 հայ զինուորները եւ բանակներու կողքին բացէն կռուող 30-40,000 հայ կամաւորները, որոնք Արեւմտահայաստանի վրայ ռուսական արշաւանքին յաջողութեանը մեծապէս նպաստեցին իրենց քաջագործութիւններով, այլեւս ոչ մէկ տարակոյս կը մնայ թէ հայերը լիովին արժանի են այն ազատութեան եւ անկախութեան, որուն կը բաղձան»[45]։

Հայ գործիչների, յատկապէս Նուբարի հետ հանդիպման արդիւնքում Սայքսը գիտակցում է, որ Մուդրոսի Զինադադարով անարդար վերաբերմունք է դրսեւորուել հայերի նկատմամբ։ Հռոմում Ֆրանսիական դեսպան Կամիլ Բարրէրի (Camille Barrere, 1851-1940) ***հետ զրոյցում Սայքսը նկատում է, որ զինադադարի պայմանները հայերին անհրաժեշտ երաշխիքներ չեն չնորհում, որը նա համարում էր*** «զիջում պանթուրանիզմին»[46]։ ***Նոյեմբեր 3ին լորդ Ռոբերտ Սեսիլին*** (Robert Cecil, 1864-1958) ***ուղարկած հեռագրում Սայքսը մեծ դժգոհութիւն է յայտնում հայերին վերաբերող զինադադարի պայմանների մասին, եւ առա-***

ջարկում է դաշնակիցների կողմից հռչակագիր ընդունել, ըստ որի Հայաստանը վերջնականապէս ազատագրուելու էր թուրքական գերիշխանութիւնից[47]։

Սայքսի միջնորդութեամբ Բարրէրը Ֆրանսիայի Արտգործնախարարութիւնից պահանջում է վերահսկել Ֆրանսիական մամուլը, որպէսզի այնտեղ թուրքամէտ եւ հայերին վիրաւորող յօդուածներ չտպագրուեն։ Դա պայմանաւորուած էր Պիէր Լոթիի (Pierre Loti, 1850-1923) *մի յօդուածով, որը դեռ նոր ցեղասպանութիւն իրականացրած թուրքերին գովերգում էր եւ նոյնիսկ համարում* «մարդկանցից ամենամարդկայինը»[48]։ *Դա վիրաւորել էր հայերին եւ վրդովել ինչպէս Սայքսին, այնպէս էլ Բարրէրին։*

1918 *Դեկտեմբերին Հալէպում Հայ Ազգային Միութեան կազմակերպած երեկոյթում Սայքսը հետեւեալ խորհուրդն է տալիս հայերին.* «Եթէ դուք հայերդ, [...] ձեր սեփական ուժերով Կիլիկիոյ գրաւումը, որպէս կատարուած իրողութիւն, դաշնակիցներուն առջեւ չի դնէք, մի սպասէք որ անոնք այդ երկիրը ձեզ պիտի թողուն»[49]։ *Սակայն մինչեւ վերջնական յուսախաբութիւն ապրելը հայերը չհամարձակուեցին սեփական ուժի վրայ յենուած գործողութիւնների գնալ եւ սպասեցին, որ մեծ տէրութիւնները իրենց փոխարէն լուծեն հայ ժողովրդին յուզող հարցերը։ Կարծում ենք, քանի դեռ Ֆրանսիական մեծաթիւ ուժեր չէին մտել Կիլիկիա* (1919 *Նոյեմբեր*) *եւ այն պահւում էր Հայկական Լեգէոնի ու բրիտանական զօրքերի կողմից, անհրաժեշտ էր աւելի վճռական գտնուել ու ինքնավարութեան պահանջներ ներկայացնել Ֆրանսիային։ Յետագայում նման չափազանց ուշացած փորձ կատարուեց* 1920 *Օգոստոսին, սակայն դա արդէն արկածախնդրութիւն էր, քանի որ Լեգէոնը գրեթէ ցրուած էր, քեմալական շարժումը արդէն մեծ թափ էր ձեռք բերել եւ նրանց յարձակումը հայերը միայնակ դիմակայել չէին կարող, իսկ Ֆրանսիան տեղում բաւարար ուժ ունէր հայկական շարժումը ու ինքնավարութեան ձգտումները արագօրէն ճնշելու համար։*

Սայքսը մահանում է իսպանական գրիպից 1919 *Փետրուարի* 16*ին Փարիզում։ Դին տեղափոխւում է Բրիտանիա եւ չնայած որ նա կաթոլիկ էր, նրան թաղում են Անգլիկան Եկեղեցու գերեզմանատանը։*

Այսպիսով, ինչպէս ցոյց տուեց մեր ուսումնասիրութիւնը, Սայքսը բազմիցս եղել է Հայաստանում ու Կիլիկիայում։ Սկզբնական շրջանում նա այնքան էլ լաւ չի տրամադրուել հայերի նկատմամբ եւ մտածել է, որ Հայաստան եզրը վաղ թէ ուշ դուրս է գալու ասպարէզից, իսկ հայերը դատապարտուած են ոչնչացման։ Դաշնակից երկրների միջեւ Թուրքիայի բաժանման բանակցութիւնների ժամանակ նա ամէն ինչ է անում, որպէսզի խոչընդոտի հայկական պետութեան վերականգնման հնարաւորութեանը եւ այդ նպատակին էր ուղղուած Հայաստանը Ռուսաստանի ու Ֆրանսիայի միջեւ բաժանելու նախագիծը։ Սակայն հետզ-

հետէ նա փոխում է իր կեցուածքը հայերի հանդէպ։ Դատապարտում է թուրքերի կողմից իրականացուած Մեծ Եղեռնը, ինչպէս նաեւ թուրքական կեղծ քարոզչութիւնը, որ իբր հայերն են կոտորում մահմեդականներին։ Նա իր դրական մասնակցութիւնն է ունենում Հայկական Լեգէոնի կազմաւորման շուրջ եղած բանակցութիւններին։ Յետագայում, ականատես լինելով հայկական զինուժի կողմից ցուցաբերուած բարձր մարտունակութեանը՝ Կովկասեան եւ Պաղեստինեան ռազմաճակատներում, նա գալիս է այն եզրայանգման, որ հայ ազգը իրաւունք ունի վերականգնուած տեսնելու հայոց պետականութիւնը։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] http://en.wikipedia.org/wiki/Mark_Sykes, 09.05.2011

[2] *Լ. Շիրինեան, Թուրքիա-Հայաստան. Ռազմավարական Զիգզագներ, Երեւան, Լուսակն Հրատ.*, 2006, *էջ* 25։

[3] M. Sykes, *Through Five Turkish Provinces*, London, Jesus collage, Cambridge, 1900։

[4] *Նոյն, էջ* 71, 73, 89։

[5] *Նոյն, էջ* 92։

[6] *Նոյն, էջ* 113։

[7] *Նոյն, էջ* 80։

[8] M. Sykes, *The Caliphs' Last Heritage. A short History of the Turkish Empire*, London, Macmilan and co., 1915։

[9] *Նոյն, էջ* 417։

[10] 1870*ականներից, յատկապէս Հայկական Հարցի միջազգայնացումից յետոյ, բրիտանացիները եւ թուրքերը Հայաստան եզրի փոխարէն օգտագործում էին Քրդստան անուանումը։*

[11] *Նոյն, էջ* 418։

[12] *Նոյն, էջ* 372, 547։

[13] http://en.wikipedia.org/wiki/Mark_Sykes, 09.05.2011.

[14] *Կիլիկիայի ուղղութեամբ արշաւանք կազմակերպելու ծրագրերի մասին տե՛ս՝ Սամուէլ Պօղոսեան, «Կիլիկիան Ազատագրելու Ծրագրերը* 1915*թ.», Պատմաբանասիրական Հանդէս*, 2006, *թիւ* 2, *էջ* 13-21։

[15] *Միհրան Տամատեան, Իմ Յուշերէս, Պէյրութ, ՌԱԿ Պէյրութի Միհրան Տամատեան Ակումբի Հրատ., Տպ. Զարթօնք*, 1985, *էջ* 103-104։

[16] *Նոյն, էջ* 104։

[17] *Արթուր Պէյլէրեան, Մեծ Տէրութիւնները, Օսմանեան Կայսրութիւնը եւ Հայերը Ֆրանսիական Արխիւներում (1914-1918)*, *հատոր* I, *Երեւան, Հայաստան Հրատ.*, 2005, *էջ* 287։

[18] Sykes, *The Caliphs' Last Heritage*, *էջ* 402։

[19] *Պէյլէրեան, էջ* 262-263։

[20] http://en.wikipedia.org/wiki/Mark_Sykes, 09.05.2011.

[21] *Մհեր Կարապետեան, Հայաստանը 1912-1920 Թուականներին, Երեւան, Զանգակ*-97 *Հրատ.*, 2003, *էջ* 16-17։

[22] *Պէյլէրեան, էջ* 265-268։

[23] *Հայաստանը Միջազգային Դիւանագիտութեան եւ Սովետական Արտաքին Քաղաքականութեան Փաստաթղթերում (1828-1923), խմբ. պրոֆ. Ջոն Կիրակոսեան, Երեւան, Հայաստան Հրատ.*, 1972, *էջ* 384-385։

[24] *Նոյն*, *էջ* 385-388։
[25] *Պէյլէրեան*, *էջ* 294։
[26] *Սազոնովը Քրդստանի մարզ է անուանում Բիթլիսի ու Վանի նահանգների հարաւային շրջաններ Բոհտանը եւ Հեքքիարին՝ Մուշի, Սղերդի, Տիգրիսի հոսանքի, Ջեզիրէ Իբն Օմարի, Ամադիայի վրայ իշխող լեռնագագաթների գծի եւ Մերգեւէրի միջեւ։*
[27] *Գիւղաքաղաք Սեբաստիայի նահանգում, Կեսարիայից արեւելք, պատմական Ծամնդաւի (այժմ՝ Մելիքգազի) շրջանում։*
[28] *Նոյն*, *էջ* 273-274։
[29] *Նոյն*, *էջ* 281։
[30] *Նոյն*, *էջ* 281-282։
[31] *Նոյն*, *էջ* 283։
[32] *Նոյն*, *էջ* 287-288։
[33] *Նոյն*, *էջ* 294։
[34] *Նոյն*, *էջ* 288։
[35] *Նոյն*, *էջ* 294-295։
[36] *Boghos Nubar's Papers and the Armenian Question 1915-1918. Documents*, edited and translated by Vatche Ghazarian, Waltham, Mayreni Publishing, 1996, *էջ* 382-383։
[37] *Նոյն*, *էջ* 384-386։
[38] *Նոյն*, *էջ* 389-390։
[39] *Ջէյմս Մալքոլմի նախնիները Հնդկաստանից էին տեղափոխուել Լոնդոն։ Նա աւարտել էր Օքսֆորդի Համալսարանը, եւ Բրիտանիայի Արտգործնախարարութեան Արեւելքի հարցերով խորհրդական էր. Սայքսի հետ ունէր ընտանեկան շատ մտերիմ յարաբերութիւն։*
[40] *Արթուր Պէյլէրեան*, «*Ֆրանսա եւ Հայկական Հարցը Առաջին Համաշխարհայինի Տարիներուն* (1914-1918)», *Պատմաբանասիրական Հանդէս*, 1990, *թիւ* 2, *էջ* 38։
[41] *Boghos Nubar's Papers*, *էջ* 393-397։
[42] *Նոյն*, *էջ* 403։
[43] M. Sykes, *The Future of the Near East*, London, 1918, Pelican Press, *էջ* 2, 8, 9։
[44] *Տամատեան*, *Իմ Յուշերէս*, *էջ* 129-130։
[45] *Նոյն*, *էջ* 130-131։
[46] *Արթիւր Պէյլէրեան*, *Մեծ Տէրութիւնները, Օսմանեան Կայսրութիւնը եւ Հայերը Ֆրանսիական Արխիւներում (1914-1918)*, *Հտր*. II, *Երեւան*, *Հայաստան Հրատ*., 2005, *էջ* 416-417։
[47] *Նոյն*, *էջ* 417-418։
[48] *Նոյն*, *էջ* 431։
[49] *Միքայէլ Նաթանեան*, «*Նիւթեր Ժամանակակից Պատմութեան Համար։ Ինչ Պատրուակով Կիլիկիան Կրկին Թուրքերուն Տրուեցաւ*», *Պայքար, Նոր Տարւոյ Բացառիկ*, *Բոստոն*, 1950, *էջ* 81։

THE BRITISH DIPLOMAT MARK SYKES AND THE ARMENIAN QUESTION
(Summary)

SAMVEL POGHOSYAN
samvelp77@mail.ru

The British statesman and diplomat Mark Sykes travelled extensively in the Middle East and researched the region. During World War I he gained substantial influence in the British Foreign Affairs Ministry concerning British Middle East policy. During WWI he and the French diplomat Georges Picot worked on the secret agreement of dividing the Ottoman Empire between Britain, France and Russia.

Mark Sykes knew the Armenians and the Armenian Question well and condemned the Armenian Genocide. He was instrumental in the negotiations that led to the establishment of the Armenian Legion in the French Army. His expert advice to Boghos Nubar became part of the requests Nubar made in negotiations regarding the formation of the Armenian Legion. During WWI Sykes appreciated the fighting abilities of the Armenian soldiers on the Caucasian front and the courage of the Armenian Legionaries. The author notes that notwithstanding his initial rejection of Armenian independent statehood, eventually Sykes felt that right of the Armenians to independent statehood should be realized.